Օր. ...

ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3,
4-րդհարկ,<<Ինֆորմացիայի
ազատությանկենտրոն>>ՀԿ
նախագահԼ. Դոյդոյանին

ՀՀ ԱԱԾ տնօրենին հասցեագրված Ձեր 23.02.2016թ. N 269-ի 3 տեղեկատվություն ստանալու հարցման կապակցությամբ հայտնում եմ, որ ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 15.10.2015թ. N 1204-Ն որոշման 3-րդ կետի հանձնարարականի՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության պաշտոնական կայքում էլեկտրոնային թվային ստորագրությամբ ուղղակիորեն հարցում գրելու կամ ստորագրված հարցումները կցելու հնարավորության ստեղծումը դեռևս ներդրման փուլում է:

Միաժամանակ ՀՀ ազգային անվտանգության ծառայության ներկայումս գործող պաշտոնական կայքում առկա են ՀՀ ազգային անվտանգության ծառայության էլեկտրոնային փոստի հասցեները, որոնց միջոցով դիմողները կարող են առցանց հարցումներ իրականացնել (բաժիններ՝ <<Կապ ՀՀ ԱԱԾ հետ>>www.sns.am/index.php/am/contacts, <<Ընթացակարգեր>>www.sns.am/index.php/am/yntacakarger): 2016 թվականի հունվարի 1-ից առ այսօր ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում էլեկտրոնային փոստի միջոցով ստացվել է 3 նամակ, որոնցից երկուսին տրվել է բանավոր, մեկին՝ գրավոր պատասխան:

ՎարչությանպետԱ. Ավետիսյան